

ընկած կայ խոյի զլիսու ձեռով մի արձան, որոյ վերայ խիստ գեղեցկագոյն կոփուած կան խոյի եղջիւրներն:

11. ԲՐՈՒՔՅԻՔ.—Գիւղս հաստատուած է նոյն անուամբ ձորակի մի աջ ափի մօտ, Գեազգեազքէ $\frac{1}{2}$ ժամ արևելեան հիւսիս, 1 ժամ ևս արևմտեան հիւսիս Համզի գիւղի, 1 ժամ ի հիւսիս Զէյթի, ունի 16 տուն բնակիչ:

12. ՀԱՄՁԻ ԳԻՒՂ.—Գիւղս 1 ժամ յարևելս Բրուքցոց, 1 ժամ արևմտեան հիւսիս Գուժոյի, 1 ժամ արևելեան հիւսիս Ղարա-Նարի գիւղին, ունի 13 տուն բնակիչ:

13. ՂԱՐԱ-ՆԱԲԻ.—1 ժամ արևելեան հարաւ Զէյթ գիւղին, $\frac{5}{4}$ ժամ հարաւ Բրուքցոց, 1 ժամ արևմտեան հիւսիս Ճէմի-Չաթոյի, $\frac{5}{4}$ ժամ արևմտեան հարաւ Համզի, ունի 25 տուն բնակիչ:

14. ԶԷՅԹ.—Բրուքցոց ջրի աջ ափին վերայ, 1 ժամ ի հարաւ Գեազգեազքէ, 1 $\frac{1}{2}$ ժամ հիւսիսային յարևելս Սազունչուայ, ունի 30 տուն բնակիչ:

15. ԱԷՄԻ-ՉԱԹՈՅ.—Ախտի գետի ձախ ափին վերայ, 1 ժամ ի հարաւ Տուժոյի գիւղէն, $\frac{1}{2}$ ժամ ի հիւսիս Գումէ, 1 ժամ արևելեան հարաւ Համզի գիւղէ, ունի 63 տուն բնակիչ:

16. ՏՈՒԺՈՅԻ գեղ՝ որ ունի 8 տուն բնակիչ:

17. ԱՂ-ՉԱՅ (սպիտակ գետ).—Ճէմի-Չաթոյի հիւսիսն՝ սարի շուրթն 25 տուն բնակչօք մի գիւղ է:

18. ԱԲՈՒԶԷԹ.—Մօլլա-Ալիի հիւսիս 10 տուն բնակիչ: